# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 245-Ա

### 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՎՈՎ 10 ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 14.08.2024 թվականի թիվ 123-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Ելփին բնակավայրում ս/թ օգոստոսի 30-ին կազմակերպվող տոնական միջոցառման շրջանակներում Ելփին բնակավայրի թվով 10 տաղավարների ձևավորման և հյուրասիրության կազմակերպման համար հատկացնել 40.000-ական ՀՀ դրամ գումար յուրաքանչյուր սեղանին՝ այն անկանխիկ եղանակով փոխանցելով սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ որպես ներկայացուցիչների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված

Արենի համայնքի ղեկավարի

26.08.2025թ. թիվ 245-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Միանվագ գումարի հատկացման

| | Անուն , հայրանուն,ազգանուն | Անձնագրի տվյալներ | հաշվեհամար | Գումարի չափ |
|---|---|---|---|---|
| 1 | Լիանուշ Ավագի Առաքելյան | AS0271869 | 220021590280000 | 40000 |
| 2 | Սուսաննա Խաչիկի Բաբայան | 017096579 | 16016024529800 | 40000 |
| 3 | Գայանե Յուրիկի Հարությունյան | 012924528 | 2470031981960000 | 40000 |
| 4 | Մարինե Սուրիկի Ջավադյան | 005312780 | 220021032044000 | 40000 |
| 5 | Եվա Ալբերտի Մկրտչյան | 016690281 | 16016012529210 | 40000 |
| 6 | Անահիտ Սմբատի Խաչատրյան | 017838210 | 220021030683000 | 40000 |
| 7 | Լուսիկ Ալբերտի Աղախանյան | 009720129 | 1601600973840 | 40000 |
| 8 | Մարիամ Ահարոնի Միքայելյան | 007067341 | 220021318195000 | 40000 |
| 9 | Սոֆյա Քաջիկի Հակոբյան | 011529278 | 24113016663000 | 40000 |
| 10 | Լիզա Ռուբիկի Հակոբյան | AV0520358 | 1601619693905 | 40000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 246-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԱՎԻԹ ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացու դիմումները՝ ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Դավիթ Աշոտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝

1) 0,89525 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0284-0012, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկ խաղողի այգի:

2) 4 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0284-0011, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 247-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 36-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 22.04.2025թվականի թիվ 01/06.2/2543-2025 գրությամբ ներկայացված լիազոր մարմինների դրական եզրակացությունները և քաղաքացու դիմումը, ***որոշում եմ՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 36-րդ փողոց, թիվ 32 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0002-0027, հողամասի չափը՝ 0,08623 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) Արթուր Մարկոսի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված կիսակառույց հասարակական նշանակության շինությունները՝ 360,48քմ.՝ ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 20246YL3CT:
3. Առաջարկել կառույցն իրականացրած Արթուր Մկրտչյանին վճարելու 1 քմ.՝ 2418 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինությունների համար՝ ընդամենը 871 641 ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված

կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման վճարները վճարվում են անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355003451:
5. Ինքնակամ կառուցված կիսակառույց շինությունները ավարտին հասցնելու նպատակով կառուցապատող Արթուր Մկրտչյանին տրամադրել նախագծման թույլտվություն, որի հերթական համարն ՝ N ՆԹ-6990-25, տրված 18.08.2025թվականին:
6. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
7. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցի համար հաշվարկված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 248-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 05.06.2025 թվականի թիվ 070-Ա որոշումը, որոշում եմ՝

1. ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի 16-րդ փողոց 5 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

2. ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ռինդ բնակավայրի 16-րդ փողոց 23 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

3. ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ագարակաձոր բնակավայրի 1-ին փողոց 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

4. ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արփի բնակավայրի 1-ին փողոց 3 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 249-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՅՈՒԼԻ ԴԱԼԻ»ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 09 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ 2.2174 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով՝ Արենի համայնքի ավագանու 05.06.2025թվականի թիվ 072-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Արենի համայնքի և «ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ» ՍՊԸ-ի միջև կնքված 09 հունիսի 2020 թվականի ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքի Խաչիկ բնակավայրի Կվարցիտի 1-ին թաղամաս 2 հասցեում գտնվող 2,2174 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-025-0106-0010, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման) վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 14.09.2033 թվականը:

2. Տարեկան վարձավճարը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 6 000 000 ՀՀ դրամ և յուրաքանչյուր արդյունահանված օգտակար հանածոյի 1 տոննայի հաշվարկով 1000 ՀՀ դրամ:

3. Տարեկան վարձավճարի 6 000 000 ՀՀ դրամ գումարը վճարվում է հավասար պարբերականությամբ՝ ըստ ամիսների: Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև հաջորդող ամսվա 15-ը:

4. Արդյունահանված օգտակար հանածոների համար վճարումները կատարվում են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված հաշվետվությունների հիման վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 250-Ա

## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՎՈՎ 12 ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 14.08.2024 թվականի թիվ 123-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրում ս/թ սեպտեմբերի 6-ին կազմակերպվող տոնական միջոցառման շրջանակներում Ագարակաձոր բնակավայրի թվով 12 տաղավարների ձևավորման և հյուրասիրության կազմակերպման համար հատկացնել 40.000-ական ՀՀ դրամ գումար յուրաքանչյուր սեղանին՝ այն անկանխիկ եղանակով փոխանցելով սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ որպես ներկայացուցիչների:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 251-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,00367ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն, 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն որոշումները, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը՝ որոշում եմ.

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.00367 հա հողամասի (ծածկագիր՝ 10-006-0018-0001-ից, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողերի) գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական դասակարգման և գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն: Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ Արենի համայնք, գ. Աղավնաձոր 7-րդ փողոց 1/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 252-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ.-ի թիվ 2387-Ն, որոշումը, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.08455 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0003-0001-hg, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն: Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ Արենի համայնք, գ. Արենի 36-րդ փողոց, 5-րդ փակուղի 1/1 հողամաս:

2. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.78687 հա հողամասը (ծածկագիր՝ 10-004-0033-0002, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող հողեր, գործառնական նշանակությունը՝ պատմական և մշակութային) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն: Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ Արենի համայնք, գ. Ագարակաձոր 3-րդ փողոց, 1-ին փակուղի 3 հողամաս:

3. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 2,17498 հա հողամասը (ծածկագիր՝ 10-025-0111-0068, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող հողեր, գործառնական նշանակությունը՝ պատմական և մշակութային) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն: Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ Արենի համայնք, գ. Խաչիկ 14-րդ փողոց, 17 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 253-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 2,57180 հա հողամասը (ծածկագիր՝ 10-006-0313-0114-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1,17514 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0184-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 254-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30 ՀՈՒԼԻՍԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 218-Ա ԵՎ 219-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով. որոշում եմ՝

Արենի համայնքի ղեկավարի 30-ը հուլիսի 2025 թվականի «Արենի համայնքի ղեկավարի 03 ապրիլի 2023 թվականի թիվ 072-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 218-Ա, 30 հուլիսի 2025 թվականի «Արենի համայնքի ղեկավարի 03 ապրիլի 2023 թվականի թիվ 073-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 219-Ա որոշումների հղման մեջ «2-րդ և 3-րդ կետերը» թվանշանները և բառերը փոխարինել « 1-ին կետի» թվանշանով և բառերով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 255-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏՈՎ) ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արենիի համայնքի ավագանու 21 օգոստոսի 2025 թվականի թիվ 112-Ա որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-213 հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ՝

1. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, 10 տարի ժամկետով, անհատույց, սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտով) տրամադրել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ հողամասերում համապատասխան հետազոտությունների, անտառհիմնման ու բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով ։

2. Սերվիտուտով տրամադրված տարածքներում գտնվող խմելու և ոռոգման ջրի ջրաղբյուրները ինչպես նաև ջրագծերը ամբողջությամբ վերահսկվում են Արենիի համայնքապետարանի կողմից:

3. Սույն որոշմամբ տրամադրված հողատարածքներում իրականացվող ծրագրերի արդյունավետությունից և անհրաժեշտությունից ելնելով հետագայում վերանայել տրամադրման ժամկետը:

4. Արենի համայնքի բնակիչները իրավունք ունեն անարգել օգտվել հատկացված տարածքներից՝ խոտհնձի, խոտաբույսերի հավաքման և համատեղ համաձայնեցված այլ նպատակներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 256-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԱՆ ԷԴԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,11766ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արման Էդիկի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 0,11766 հա բնակավայրերի նշանակության հողամասի (ծածկագիրը՝ 10-008-0017-0044, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բաժանման ընթացքում առաջացած.

1) 0,06000 հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի, գ. Արենի 33-րդ փողոց, 2 հողամաս:

2) 0,05766 հա հողամասին տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի, Արենի 33-րդ փողոց, 2/4 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 257-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՆԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 23.1-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 28.11.2024 թվականի թիվ 172-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

Թույլատրել ընկերության տնօրենին Արենի համայնքի անունը օգտագործել «ԱՐԵՆԻ ԱՐՄԱՏ» ՍՊԸ-ի ֆիրմային անվանման մեջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 258-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արթուր Հովհաննեսի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,32163հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0122-0008, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկ խաղողի այգի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 259-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 248-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և հիմք ընդունելովՀայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ և 689-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 09.09.2025 թվականի թիվ 119-Ա որոշումը, որոշում եմ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 28 օգոստոսի 2025 թվականի «Արենի համայնքի սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շենքերը համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին» թիվ 248-Ա որոշումը:

2. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի 16-րդ փողոց 5 հասցեում գտնվող 0.40127 հա (ծածկագիր 10-008-0041-0019 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը և շինությունները (կաթսայատուն, կոյուղու մաքրման կայան, թվով 4 պարիսպ, հարթակ)՝ անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման

իրավունքով տրամադրել «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

3. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ռինդ բնակավայրի 14-րդ փողոց 23 հասցեում գտնվող 0.3574 հա (ծածկագիր 10-037-0026-0018 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման ) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

4. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ագարակաձոր բնակավայրի 1-ին փողոց 1-ին փակուղի 3 հասցեում գտնվող 0.587 հա (ծածկագիր 10-004-0013-0011 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման ) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

5. Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արփի բնակավայրի 1-ին փողոց 3 հասցեում գտնվող 0.265 հա (ծածկագիր 10-012-0021-0025 գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը և նրա վրա առկա մանկապարտեզի շենքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին, նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ